60. ՄԱՐԹՆ Ո̈ՒՐԱ̈Ն ԿՅԱՆՔԱՎԸ ՉԻ ԱՊՐՈՒՄ...

Աստված կյանքը պիժինիլիս ամենաառաջ մարթն ա քյինամ։ Մարթին տամ ա քսան տարի։ Տա խռավում ա, էն ղուլին նըստում։ Ետնան շոնն ա քյինամ։ Տրան էլ տամ ա քառասուն տարի։ Շոնը, թա ես քառասուն տարե ո̈ւրո̈ւշո̈ւ տռան հա̈շյիղը, վրեսկուռ հվաքողը չըմ, ինձ քսանը բոլ ա, հանե՜ խռավկուտը ընդեղ վիզը ծռած, նստած, մնացած քսանն էլ տո ո̈ւրա̈ն, բալքյի աշկը քուշտանա։

Աստված շանը քսան տարեն յոր ա օնում, տամ մարթին։ Մարթին կյանքը տըեռնում ա քառասուն տարի։ Մարթը էլլա վեզը ծռած նստում ա, հըռանում չի։

Տրանա եռը էշն ա կյամ։ Էշին էլ ա քառասուն տա̈րե տամ։ Սա թա՝ ես քառասուն տարե ո̈ւրո̈ւշո̈ւ տռներե քաշքաշ ինո̈ղը, պեռնը կրողը չըմ, քսանն ինձ բոլ ա։ Մընացած քսանն էլ տո հանե՜, էն ղուլին խռավված նստած, նրան։ Աստված էշին քսան տարեն էլ ա յոր օնում, տամ մարթին, տըեռնում ա վաթթուն տարի։

Մարթը էլլա չի հեռու կենում։ Վիզը ծռած, մնամ ա նստած։

Տրանա եռը մեյմունն ա կյամ, քառասուն տարե յել սրան ա տամ։ Սա թա ես քառասուն տարե ո̈ւրո̈ւշո̈ւ տնըղաղեղը, մըեծեն կուճուրեն ինձիրա ծիծաղել տվողը չըմ, քսան տարեն ինձ էլ ա բոլ, իմ պըպերեն էլ, հանե՜, մարթը խռավված, վիզը ծռած, ընդըեղ նստած։ Մնացած քսան տարեն եր կալ, տո ո̈ւրա̈ն։ Աստված մեյ-

մունին քան տարեն էլ ա յոր օնում, տամ մարթին։ Տրեռնում ա ութասուն տարե։

Մեհենգլ մարթը ուրան իսկական կյանքավը քան տարե յա ապրում, քանմինան մինչև քառասունը շանը կյանքավն ա ապրում (շնորհուն ա անում), քառասունամինան մինչև վաթսունը՝ էշին կյանքավը (շատ ա ըշխատում), վաթսունան տենը՝ մեյմունու մնան մաշկան կոտրած ա ինում։